Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1213[1]-11.12.2025-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

««ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անկանխիկ գործառնությունների մասին» 2024 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-395-Ն օրենքի 6. 1-ին հոդվածում.

1. 1-ին մասը «չափը» բառից հետո լրացնել «բացառությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի:» բառերով:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքը կարող է իրականացվել կանխիկ ձևով, եթե.

1) գործարքի գումարը չի գերազանցում երեք հարյուր հազար ՀՀ դրամը,
2) կրիպտոակտիվներով գործարքն իրականացվում է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի հետ կամ միջոցով,
3) սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձն իրականացնում է հաճախորդի նույնականացում և ինքնության ստուգում պետական իրավասու մարմնի տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա, որը պետք է առնվազն ներառի անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև վարում է հաճախորդի հետ կամ հաճախորդի հաշվին կնքված գործարքի բոլոր էական պայմանների վերաբերյալ գրանցումներ:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Սույն Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը գործում է մինչև 2028 թվականի հունվարի 1-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

««ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կ-1213[1]-11.12.2025-ՖԿ-011/1

Հոդված 1~~.~~. «Անկանխիկ գործառնությունների մասին» 2024 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-395-Ն օրենքի 6~~.~~. 1-ին ~~հոդվածը~~հոդվածում.

1. 1-ին մասը «չափը» ~~բարից~~բառից հետո լրացնել ~~«՝~~ «բացառությամբ ~~օրենքով՝~~ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի~~»~~:» բառերով~~։~~:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործարքը կարող է իրականացվել կանխիկ ձևով, եթե.

1) գործարքի գումարը չի գերազանցում երեք հարյուր հազար ՀՀ դրամը,
2) կրիպտոակտիվներով գործարքն իրականացվում է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի հետ կամ միջոցով,
3) սույն մասի 2-րդ կետով նախատեսված անձն իրականացնում է հաճախորդի նույնականացում և ինքնության ստուգում պետական իրավասու մարմնի տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա, որը պետք է առնվազն ներառի անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, ինչպես նաև վարում է հաճախորդի հետ կամ հաճախորդի հաշվին կնքված գործարքի բոլոր էական պայմանների վերաբերյալ գրանցումներ:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

: Սույն Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը գործում է մինչև 2028 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1213-11. 12. 2025-ՖՎ-011/1) ԵՎ «ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1213[1]-11. 12. 2025-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Աժ պատգամավոր Ծովինար Վարդանյան	«Կրիպտոակտիվների մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդված	Կենտրոնական բանկին գրավոր ձևով դիմելու ժամկետը մինչև 2026 թվականի հունվարի 15-ի ժամկետը փոխարինել մինչև 2026 թվականի հունվարի 31-ը ժամկետով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Աժ պատգամավոր Ծովինար Վարդանյան	«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածհի	Կրիպտոակտիվներով գործարքի գումարը մինչև երեք հարյուր հազար ՀՀ դրամը կանխիկ եղանակով կատարելու ժամկետը սահմանել մինչև 2028 թվականի հունվարի 1-ը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Աժ պատգամավոր Ծովինար Վարդանյան	«Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ	Գործարք իրականացնելիս՝ հաճախորդի նույնականացման համար, նրա հաշվառման հասցեն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված	անձին տրամադրվում է դրա առկայության դեպքում, ինչպես նաև հանել բնակության վայրը պարզելու պահանջը:		